ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 74 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 12 -ի թիվ. 32 -Ա որոշումը.

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Սարագյուղ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-101-0006-0005 կադաստրային ծածկագրով 0.0392 հեկտար հողամասի /հասցե՝ մարզ Շիրակի, Աշոցք համայնք, գյուղ Սարագյուղ, 1-ին փողոց, թիվվ 3/1/ օտարման աճուրդը անցկացնել՝ 2021 թվականի օգոստոսի 12-ին, ժամը 12^{00}-ին Աշոցքի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ մարզ Շիրակ Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, հրապարակ 1):

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի աճուրդը կազմակերպելու համար ստեղծել աճուրդային հանձնաժողով, հետևյալ անհատական կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Մանուկյան – Աշոցք համայնքի ղեկավար,

անձնաժողովի անդամներ՝

Եսայի Եսայան - Աշոցք համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ),
Ալեքսան Իգիթյան - Սարագյուղ բնակավայրի վարչական ղեկավար,

Լևոն Կոնդյան - Աշոցք համայնքի ղեկավարի տեղակալ

Կարապետ Հակոբյան - Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,

Նարինե Հարությունյան - Աշոցք համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար:

2. Աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության կառավարության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am կայքի «Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ» բաժնում և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել հայտարարություն՝ սակարկությունների անցկացման տեղի, օրվա, ժամի, հողամասի գտնվելու վայրի, ծածկագիրի, մեկնարկային գինի, չափի, աճուրդի քայլի, նախավճարի չափի, օգտագործման նպատակի, ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայության մասին:

3. Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը համաձայն N 1 հավելվածի:

4. Աճուրդը անցկացնելու համար աճուրդավար հաստատել աճուրդային հանձնաժողովի անդամ, Աշոցք համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Կարապետ Հակոբյանին, արձանագրող՝ աճուրդային հանձնաժողովի անդամ, Աշոցք համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար՝ Նարինե Հարությունյանին:

2. Աճուրդային հանձնաժողովին՝

Հողամասերի աճուրդը կազմակերպել՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-70-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվական հուլիսի 12
գյուղ Աշոցք

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Աշոցք համայնքի ղեկավարի 2021 թվականի
հուլիսի 12-ի թիվ 74 -Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն աճուրդով օտարման մասին

Աճուրդի կազմակեպիչը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարան,
Աճուրդի անցկացման օրը՝ 2021 թ. օգոստոսի 12-ին, ժամը՝ 12:00-ին,
Աճուրդի անցկացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարան (հասցեն՝ մարզ Շիրակ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, հրապարակ 1),
Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2021 թ. օգոստոսի 9-ը, ժամը՝ 18:00,
Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ 5%,
Գնային առաջարկի նվազագույն չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ 5%,
Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 3000 ՀՀ դրամ,
Աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Հողամասերի տվյալները, օտարման մեկնարկային գներն ու պայմանները

N	Հողամասի գտնվելու վայրը, հասցեն	Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Օտարման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Օտարման եղանակը	Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)	Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%)	Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (դրամ)
1.	Մարզ Շիրակ, համայնք Աշոցք, գ. Սարագյուղ, 1-ին փողոց, թիվ 3/1	08-101 -0006-0005, 09032021-08-0035	0.03920	բնակավայրերի	հասարարակական կառուցապատման	Եկեղեցապատկան շինության կառուցման համար	չկան	բաց աճուրդ	1 420 000	110.0	61 230

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ
ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հուլիսի 2021 թվականի N 75 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և Հայաստանի Հանրապետություն կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետերով, ***որոշում եմ***՝

Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարությանը տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցքի հրշեջ-փրկարարական ջոկատի շենքի կառուցման շինարարական աշխատանքների կատարման շինարարության թույլտվություն (ձև N 2-3-ը կցվում է):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվականի հուլիսի 20
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզ, Աշոցք համայնք
(ՀՀ մարզ, համայնք)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 6 20 հուլիսի 2021 թ.

Տրված է կառուցապատող ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը,
Երևան, Անաստաս Միկոյան 109/8
ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի Հրշեջ- փրկարարական ջոկատի շենք
3-րդ աստիճան օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվողհողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների _____
_____ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են «ԿԵՏ-ԱՐՔԻԹԵՔԹ» ՓԲԸ /լից. N 11424/ - ի կողմից.
կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

2) ստացել է (են) «28» «04» 2021թ. N 21-168 փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)
պարզ փորձաքննություն
(նշել փորձաքննության տեսակը)

«ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ /լից. No 16973, 13629 / - ի կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի հետ 20.07.2021թ.:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 17 /տասնյոթ /ամսվա ընթացքում՝
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
Ավարտական ակտի տրամադրումից ամսվա ընթացքում

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է _____ էջից, կարված և դրոշմակնքված է

Աշոցք համայնքի ղեկավարի կողմից կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 110-րդ կետով նախատեսված դեպքերում) _____ կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել _____ և այլ իրավասու մարմնի

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների _____ հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 125-128-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի* 86-րդ կետով *սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

_____

_____ :

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)*

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների)

_____ քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _____ տրված սույն

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

թույլտվությունը

նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ _____:

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

_____ Կ. Մանուկյան

(ստորագրություն անուն, ազգանուն)

Ա.Տ.